

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՍԱԾ ԳՀԾԶԲ-20/14»**

ք. Երևան

« 04 » 03 2020 թ.

Սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հ. Գևորգյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԻՏ ԵՍՎԵ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մկրտչյանի (անձն.՝ AG0453763 տրվ. 2005-04-19, 011-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն Էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն Էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Զննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է **2000000 (երկու միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

ընդ որում, 1-ին չափաբաժնի համար՝ ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ

2-րդ չափաբաժնի համար՝ ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժնի համար՝ ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VQ = UQ / N \times D \times E$, որտեղ՝

VQ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

UQ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

N-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

D-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

E-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²² Ընդ որում

տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն

5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (ինսայդություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Սոցիալական ապահովության ծառայություն

ՀՎՀՀ 02505511

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական

վարչություն

Հ/Հ 900011556355



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ

ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ. բն. 30

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570030407870200

ՀՎՀՀ 00465342



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Տեխնիկական բնութագրիչը | Ծառայության | | | | | Մատուցման | | | | | | | | | | | | | |
|---|---|--|---|---|--------------------------------|--------------------------------|--|-----------|--|---------------------------------------|------------------------------------|---|--|--|-----------|--|--|--|--|--|--|
| | | | Չափման միավորը | Ընդհանուր արավելագույն գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակ | Հասցեն | Ժամկետը | | | | | | | | | | | | | | |
| 1 | 5011130-2 | 3 հատ Chevrolet Cruze (բոլորն էլ արտադրված են 2011 թ-ին, VIN - KL1JA6959BK076032, VIN - KL1JA6959BK040996, VIN - KL1JA6959CK533956) ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված առավելագույն գնի սահմաններում: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կիրականացվի Պայմանագրով նախատեսված բանաձևով: Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ տրանսպորտային միջոցը կատարողի տեխնիկական կայանում գրանցելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ: | Դրամ | 1200000 | 1 | Բ. Երևան | Պայմանագրի ի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի «18» ներառյալ* | | | | | | | | | | | | | | |
| 2 | 5011130-3 | 1 հատ Nissan Teana (արտադրված 2011 թ-ին, VIN - JN1BBUJ32Z0003773) ավտոմեքենայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված առավելագույն գնի սահմաններում: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կիրականացվի Պայմանագրով նախատեսված բանաձևով: Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ տրանսպորտային միջոցը կատարողի տեխնիկական կայանում գրանցելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ: | Դրամ | 400000 | 1 | Բ. Երևան | Պայմանագրի ի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի «18» ներառյալ* | | | | | | | | | | | | | | |
| 3 | 5011130-4 | 1 հատ Volkswagen Passat (արտադրված 2007 թ-ին, VIN - WVVZZZ3CZ7P123442) ավտոմեքենայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված առավելագույն գնի սահմաններում: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կիրականացվի Պայմանագրով նախատեսված բանաձևով: Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ տրանսպորտային միջոցը կատարողի տեխնիկական կայանում գրանցելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ: | Դրամ | 400000 | 1 | Բ. Երևան | Պայմանագրի ի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի «18» ներառյալ* | | | | | | | | | | | | | | |
| | | <table border="1"> <thead> <tr> <th>Տեխնիկական գնման / դիագնոստիկական (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի</th> <th>Նախանուն (տեխնիկական / (տեխնիկական / (ремонт), услуги и запасные части, смазочные материалы и другие вспомогательные материалы, используемые в транспортных средствах</th> <th>Չափաբաժնի U 1 /CPV- 5011130-2/</th> <th>Չափաբաժնի U 2 /CPV- 5011130-3/</th> <th>Չափաբաժնի U 3 /CPV- 5011130-4/</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>h/h</td> <td></td> <td>Chevrolet Cruze (արտադրված 2011 թ-ին)</td> <td>Nissan Teana (արտադրված 2011 թ-ին)</td> <td>Volkswagen Passat (արտադրված 2007 թ-ին)</td> </tr> <tr> <td></td> <td></td> <td>020 LL 55</td> <td></td> <td></td> </tr> </tbody> </table> | Տեխնիկական գնման / դիագնոստիկական (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի | Նախանուն (տեխնիկական / (տեխնիկական / (ремонт), услуги и запасные части, смазочные материалы и другие вспомогательные материалы, используемые в транспортных средствах | Չափաբաժնի U 1 /CPV- 5011130-2/ | Չափաբաժնի U 2 /CPV- 5011130-3/ | Չափաբաժնի U 3 /CPV- 5011130-4/ | h/h | | Chevrolet Cruze (արտադրված 2011 թ-ին) | Nissan Teana (արտադրված 2011 թ-ին) | Volkswagen Passat (արտադրված 2007 թ-ին) | | | 020 LL 55 | | | | | | |
| Տեխնիկական գնման / դիագնոստիկական (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի | Նախանուն (տեխնիկական / (տեխնիկական / (ремонт), услуги и запасные части, смазочные материалы и другие вспомогательные материалы, используемые в транспортных средствах | Չափաբաժնի U 1 /CPV- 5011130-2/ | Չափաբաժնի U 2 /CPV- 5011130-3/ | Չափաբաժնի U 3 /CPV- 5011130-4/ | | | | | | | | | | | | | | | | | |
| h/h | | Chevrolet Cruze (արտադրված 2011 թ-ին) | Nissan Teana (արտադրված 2011 թ-ին) | Volkswagen Passat (արտադրված 2007 թ-ին) | | | | | | | | | | | | | | | | | |
| | | 020 LL 55 | | | | | | | | | | | | | | | | | | | |

| անվանումները | TS-2 (տիպ) / дивиденды 1-я доза | 002 SS 07 /KL1JA6959B K076032/ 004 SS 07 /KL1JA6959B K040996/ 005 SS 07 /KL1JA6959C K533955/ | /JN1BBUJ32Z 0003773/ | 067 SS.07 /VVWZZZ3 CZ7P12344 2/ | |
|--------------|---|--|-------------------------|--|--------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | SU-1 ներառվող ծախսերումների անվանումները | Наименования услуг, включенных в TS-1 | | | |
| 1 | Բնվման համակարգի ստուգում | Проверка системы зажигания | 5000 | 5000 | 5000 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | Проверка системы охлаждения | 5000 | 5000 | 5000 |
| 3 | Ֆուլման համակարգի ստուգում | Проверьте масляную систему | 5000 | 5000 | 5000 |
| 4 | Արտացման համակարգի ստուգում | Проверка выхлопной системы | 5000 | 5000 | 5000 |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | Проверка системы сцепления | 5000 | 5000 | 5000 |
| 6 | ՓՏ-ի աշխատանքի ստուգում | Проверка коробки передач | 5000 | 5000 | 5000 |
| 7 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | Проверка автоматической коробки передач | 5000 | 5000 | 5000 |
| 8 | Բնվման համակարգի ստուգում | Проверка системы зажигания | 5000 | 5000 | 5000 |
| 9 | Սառեցման համակարգի ստուգում | Проверка системы охлаждения | 5000 | 5000 | 5000 |
| 10 | Ֆուլման համակարգի ստուգում | Проверьте масляную систему | 5000 | 5000 | 5000 |
| 11 | Արտացման համակարգի ստուգում | Проверка выхлопной системы | 5000 | 5000 | 5000 |
| 12 | Կցորդման համակարգի ստուգում | Проверка системы сцепления | 5000 | 5000 | 5000 |
| 13 | ՓՏ-ի աշխատանքի ստուգում | Проверка работы коробки передач | 5000 | 5000 | 5000 |
| 14 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | Проверка работы автоматической коробки передач | 5000 | 5000 | 5000 |
| 15 | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | Проверка перевода карты | 5000 | 5000 | 5000 |
| 16 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | Проверка работы распределительная коробки | 5000 | 5000 | 5000 |
| | SU-2 ներառվող ծախսերումների անվանումները | Наименования услуг, включенных в TS-2 | | | |
| | | | | | |
| 1 | 1. Շարժիչ հանում և տեղադրում | 1. Двигатель Снятие и установка двигателя | 75000 | 80000 | 80000 |
| 2 | Շարժիչի քանդակ արտատպում և հավաքում | Снос и разборка двигателя | 120000 | 120000 | 120000 |

| | | | | | | |
|----|---|---|--------|--------|--------|--------|
| 3 | Շարժիչ հիմնական տրոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | Капитальный ремонт двигателя, включая все работы | 180000 | 180000 | 180000 | 180000 |
| 4 | Շարժիչ գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով | Снятие головки двигателя путем замены подушки | 50000 | 70000 | 50000 | 50000 |
| 5 | Շարժիչ գլխիկի տրոգում, եռանցում հղկումով | Ремонт головки двигателя, сварка полировкой | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 6 | Շարժիչ գլխիկի փակվածների փոխարինում հղկումով և խտաբուլվերով 1 կ-տ | Запасные клапаны головки двигателя с абразивом и отверткой 1 кт | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 7 | Վարացքի մոտի բնիկի տրոգում | Ремонт свечей зажигания | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 8 | Շարժիչ փակվածների գալանավների փոխարինում | Замена пружин клапанов двигателя | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 9 | Փակվածների խցուկների փոխարինում 1 կ-տ | Замена сальников 1 кт | 40000 | 50000 | 50000 | 50000 |
| 10 | Ջրիչների կամ հրդր-հրիչների փոխարինում 1 կ-տ | Замена горелок или гидродорелок 1 кт | 40000 | 40000 | 40000 | 40000 |
| 11 | Շարժիչ միացադերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | Замена цилиндров двигателя, главных и роликовых подшипников | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 12 | Ծնկված, լիսեռի հղկում | Абразивная полировка вала | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 13 | Ծնկված, լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում | Установка или замена снятия вала | 100000 | 100000 | 100000 | 100000 |
| 14 | Ծնկված, լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ | Замена валов роликовых валов 1 кт | 80000 | 80000 | 80000 | 80000 |
| 15 | Ծնկված, լիսեռի առամանիկի փոխարինում | Замена зубьев шестерни | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 16 | Ծնկված, լիսեռի ուղղում | Коррекция вала | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 17 | Ծնկված, լիսեռի առջևի խցուկի փոխարինում | Замена прокладки вала переднего сальника | 25000 | 30000 | 30000 | 30000 |
| 18 | Ծնկված, լիսեռի հետևի խցուկի փոխարինում | Замена сальникового вала задней прокладки | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 19 | Շարժիչ բլրկի փոխարինում | Замена блока двигателя | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 20 | Շարժիչ գլանի փոխարինում (гильзовка) | Замена цилиндра двигателя (гильзовка) | 65000 | 65000 | 65000 | 65000 |
| 21 | Մխոցի փոխարինում 1 հատ | Замена цилиндра 1 шт. | 40000 | 40000 | 40000 | 40000 |
| 22 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена распределительного вала | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 23 | Բաշխիչ լիսեռի ակամոցների հանում և տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена распределительного вала шашты | 40000 | 40000 | 40000 | 40000 |
| 24 | Բաշխիչ լիսեռի խտաբուլվի փոխարինում | Замена рычага распределительного вала | 15000 | 15000 | 15000 | 15000 |

| | | | | | | |
|----|---|---|-------|-------|-------|-------|
| 25 | Փոփանիվի փոխարինում | Замена поканнивов | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 26 | Շարժիչատանակավորի փոխարինում | Замена зубьев двигателя | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 27 | Շարժիչըթափփոխարինում | Замена цепи двигателя | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 28 | Շարժիչ կարտերի նորոգում (ռեակցում) | Ремонт сварочных работ двигателя (сварка) | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 29 | Շարժիչ կարտերի միջադիր փոխարինում | Замена подушки сиденья двигателя | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 30 | Շարժիչ քարտերի հանում, տեղադրում մաքրումով | Удаление карт двигателя, установка с очисткой | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 31 | Շարժիչ յուղի մղիչի փոխարինում | Моторное масло Замена двигателя | 70000 | 70000 | 70000 | 70000 |
| 32 | Շարժիչ յուղի մղիչի նորոգում, մաքրում | Ремонт, очистка масляного насоса двигателя | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 33 | Շարժիչ յուղի մղիչի մաքրում | Очистка масляного насоса двигателя | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 34 | Յուղի ծորակի փոխարինում | Замена масляного крана | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 35 | Օդաքաշակ փողորակի փոխարինում | Замена вытяжки | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 36 | Բ/լինեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена крышки вала | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 37 | Շարժիչ կափարիչի միջադիր փոխարինում | Замена крышки двигателя | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 38 | Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена ротанга | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 39 | Շարժիչ կափույրի փոխարինում | Замена клапана двигателя | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 40 | Շարժիչ կափույրի միջադիր փոխարինում | Замена клапана двигателя | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 41 | Շարժիչ շարժաթվափոխարինում 1 հատ | Замена двигателя 1 шт | 55000 | 55000 | 55000 | 55000 |
| 42 | Մխցային օդակների փոխարինում 1 կ-տ | замена цилиндров 1 кт | 80000 | 80000 | 80000 | 80000 |
| 43 | Շարժիչ բաշխիչ լինեռի երիթակի փոխարինում | Замена приводного вала двигателя | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 44 | Ատամանիվի փոխարինում | Замена зуба | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 45 | Ատամանիվի փոկի փոխարինում | Замена зубного уплотнения | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 46 | Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում | Замена корпуса зубного уплотнения | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 47 | Սուխարիկ փոխարինում 1կ/տ | Замена сухарик1 к / т | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 48 | Շարժիչ հանդարտիչի փոխարինում | Замена редуктора двигателя | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 49 | Շարժիչ փոկի հողվակի փոխարինում | Замена сцепления сальника двигателя | 35000 | 35000 | 35000 | 35000 |
| 50 | Շարժիչ հողվակի առանցքակալի փոխարինում | Замена подшипника прицепа двигателя | 35000 | 35000 | 35000 | 35000 |
| 51 | Շարժիչ առչկի | Замена передней крышки | 50000 | 60000 | 60000 | 60000 |

| | | | | | | |
|----|---|--|--------|--------|--------|--------|
| 73 | Իսմելատորի բոցամուղերի փոխարինում | Замена масла в двигателе | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 74 | Իսմելատորի բոցամուղերի մաքրում | Очистка инжекторных Дымоходов | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 75 | Բոցամուղի կտրվալորում | Кодирование зажигания | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 76 | Իսմելատորի բոցամուղիստարավերի փոխարինում | Замена жидкотопливных котлов | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 77 | Բեկզամոխի փոխարինում | Замена бензинового двигателя | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 78 | Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում | Замена топливного фильтра жесткой очистки | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 79 | Վառելիքի փոխարինում խողովակի հանում - տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена топливпровода | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 80 | Բռնկման կարգավորում | Настройка зажигания | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 81 | Ղեկավարման բլոկի հանում - տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена блока управления | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 82 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | Ремонт блока управления | 100000 | 100000 | 100000 | 100000 |
| 83 | Վառելիքի բաջի հանում - տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка топливного бака, а также замена | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 84 | Վառելիքի բաջի մաքրում | Очистка топливного бака | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 85 | Օդի ծախսի տվիչի փոխարինում | Замена датчика расхода воздуха | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 86 | Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում | Замена датчика температуры воды | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 87 | Ջրի խողովակի փորոակի փոխարինում | Замена водопровода, шланга | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 88 | Բենզոբաջի բեկզամոխի ցանցի փոխարինում | Замена бензинового бензинового двигателя | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 89 | Բենզոբաջի բեկզամոխի ցանցի մաքրում | Очистка бензобаковой цепи бензинового двигателя | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 90 | Ցուղի ճշշման տվիչի փոխարինում | Замена датчика давления масла | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 91 | Տվիչի փոխարինում | Замена датчика | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 92 | 3. Սառեցման - արտաձման համակարգ փոխարինում | 3. Система охлаждения и выпуска | | | | |
| 93 | Չոփիարի փոխարինում - տե-դարում կամ փոխարինում | Замена вентилятора Снятие и установка уплотнения вентилятора или установка или замена | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 94 | Ուղիատորի հանում - տե-դարում կամ փոխարինում | Снятие и установка радиатора или замена | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 95 | Ուղիատորի նորոգում | Ремонт радиатора | 55000 | 55000 | 55000 | 55000 |
| 96 | Շերտափեղկի փոխարինում | Замена жалузи | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 97 | Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում | Замена ползунка управления подъемником | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 98 | Շտրվածակող բաջի | Замена расширительного | 15000 | 15000 | 15000 | 15000 |

| փոխարինում | | ֆիլտր ԱԿՏ | | | | |
|------------|--|---|-------|-------|-------|-------|
| 7. Կախց | | 7. Подвеска | | | | |
| 124 | Տրավերսի հանում - տեղադրում կամ փոխարինում | Траверса снятие и установка или замена | 35000 | 35000 | 35000 | 35000 |
| 125 | Ձախ կամ աջ հորակալի հանում - տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена левого или правого соединения | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 126 | Առջ-ի անվակուների առանցքալի փոխարինում | Замена подшипника переднего колеса | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 127 | Առջ-ի անվակուների հանում - տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена передней шины | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 128 | Ջեռ-ի անվակուների հանում - տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена задней шины | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 129 | Ջեռ-ի անվակուների առանցքալի փոխարինում | Замена подшипника заднего колеса | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 130 | Անվակուների գամասերի - հեղուկի փոխարինում(մեկ անիվի համար) | Замена заклепок и звездочек (для одного колеса) | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 131 | Ձախ կամ աջ հորակալի խտարուների փոխարինում | Замена левого или правого составного запястья | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 132 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | Замена амортизатора | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 133 | Առջ-ի գալանակի փոխարինում | Замена передней пружины | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 134 | Առջ-ի ցնցամեղմիչի հանում - տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена переднего амортизатора | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 135 | Չարվածամեղմիչի վրանների փոխարինում | Замена амортизаторов | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 136 | Ներք-ի լծակի հանում - տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка нижнего рычага или замена | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 137 | Ներք-ի լծակի վրանների փոխարինում 1 հատ | Замена нижних рычажных тентов 1 шт. | 7000 | 7000 | 7000 | 7000 |
| 138 | Ներք-ի լծակի հեղուկի փոխարինում | Замена нижнего рычага болта | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 139 | Չարվածիչի (բարձիկի փոխարինում) | Замена подушки безопасности | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 140 | Վեր-ի լծակի հանում - տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена верхнего рычага | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 141 | Վեր-ի լծակի վրանների փոխարինում 1 հատ | Замена верхних рычажных тентов 1 шт. | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 142 | Վեր-ի լծակի հեղուկի փոխարինում | Замена верхнего рычага болта | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 143 | Ջեռ-ի վեր-ի լծակի վրանի փոխարինում 1 հատ | Замена задней верхней рычажной палатки 1 шт. | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 144 | Գլուխ հորակալների պատյակի փոխարինում | Замена шаровых опор | 5000 | 5000 | 5000 | 5000 |

| | | | | | | |
|----------------------------|--|--|--------|--------|--------|--------|
| 145 | Չորհ հորակալների փոխարինում | Замена шаровых опор | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 146 | Կայունարարինում-տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка или замена стабилизатора | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 147 | Առջ-ի կայունարարի վրանների փոխարինում | Замена переднего стабилизатора тента | 14000 | 14000 | 14000 | 14000 |
| 148 | Ջետ-ի կայունարարի վրանների փոխարինում | Замена задних рычагов стабилизатора | 14000 | 14000 | 14000 | 14000 |
| 149 | Կայունարարի կայունակի փոխարինում | Замена вала стабилизатора | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 150 | Ջետ-ի զգայնակների փոխարինում | Замена задних пружин | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 151 | Ջետ-ի ճգանդի հանում - տեղադրում կամ փոխարինում | Ретрактор снятие и установка или замена | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 152 | Ջետ-ի անկյունագծային լծակի հանում - տեղադրում կամ փոխարինում | Снятие и установка заднего рычага или замена | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 153 | Ջետ-ի ցցամեղմիչի փոխարինում | Замена заднего амортизатора | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 154 | Ջետ-ի հարվածամեղմիչի վրանների փոխարինում | Замена задних амортизаторов | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 155 | Անկյունագծային լծակի վրանների փոխարինում 1հատ | Сменные рычаги диафрагмы 1 шт | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 8. Ղեկային մեխանիզմ | | | | | | |
| 156 | Ղեկայունակի (USuSվՍՊ) հիմնական նորոգում. | капитальный ремонт | 130000 | 130000 | 130000 | 130000 |
| 157 | Ղեկայունակի (USuSվՍՊ) պորոլիկի փոխարինում | Замена суставной артерии | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 158 | Ղեկայունակի (USuSվՍՊ) առանցքային ստուռ փոխարինում | Замена ключевого моста | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 159 | Ղեկայունակի (USuSվՍՊ) խաչուկների փոխարինում | Замена ригелей | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 160 | Ղեկայունակի (USuSվՍՊ) վերանորոգման հավաքածուի փոխարինում | Замена рулевой колонки | 16000 | 16000 | 16000 | 16000 |
| 161 | Ղեկայունակի (USuSվՍՊ) քանոնում, արատավորում, հավաքում | Разрушение, Сбор колонн | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 162 | Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում | Замена сигнала рулевого механизма | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 163 | Ղեկայունակի պատյանի փոխարինում | Замена наственного корпуса | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 164 | Ղեկային մեխանիզմի փակակնքի փոխարինում | Замена обратного клапана | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 165 | Ղեկային մեխանիզմի | Замена зажима рулевого | 15000 | 15000 | 15000 | 15000 |

| | նկատարվող անորոշված անորոշված փոխարինում | մեխանիզմ | | | | |
|-----|---|--|-------|-------|-------|-------|
| 166 | Ղեկային ձողի արտաքին անորոշված փոխարինում | Замена заднего моста | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 167 | Ղեկային ձողի արտաքին անորոշված փոխարինում | Замена дроссельных подшипников | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 168 | Ղեկային կայունի ձեռքի փոխարինում | Замена средней жилы рулевой колонки | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 169 | ՂԿ-ի արտաքին անորոշված փոխարինում | Замена подшипников или кранов | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 170 | ՂԿ-ի հողափայտի փոխարինում | Снятие и установка или замена шарниров рулевой колонки | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 171 | Հիդրոուժեղարարի սղիչի փոխարինում | Замена гидравлического насоса | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 172 | Հիդրոուժեղարարի սղիչի հիմնական տրոգում, ներդաշայ աշխատանքները | Капитальный ремонт гребных винтов гидравлических насосов, включая работы | 75000 | 75000 | 75000 | 75000 |
| 173 | Հիդրոուժեղարարի փոփոխում - տեղադրում կամ փոխարինում | Гидравлическое уплотнение Снятие и установка или замена | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 174 | Հիդրոուժեղարարի բարձր ճշման խողովակի փոխարինում | Замена гидравлической трубки высокого давления | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 175 | Հիդրոուժեղարարի ցածր ճշման խողովակի փոխարինում | Замена трубы гидравлического давления низкого давления | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 176 | Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածուի փոխարինում | Замена гидравлического ремкомплекта | 50000 | 50000 | 50000 | 50000 |
